

Հայ գիտնական, ով փոխեց իմ արժեհամակարգը

Մենք ստեղծարար ազգ ենք և վստահորեն կարող ենք ասել, որ հայ ժողովուրդը մեծ ներդրում է ունեցել մարդկության ու քաղաքակրթության զարգացման բոլոր ոլորտներում: Մենք աշխարհին ենք ներկայացել Վիլյամ Սարոյանով, Վիկտոր Համբարձումյանով, Արամ Խաչատրյանով և բարձր տեխնոլոգիայի այժմյան նորամուծություններով, որի նորոքյա կենտրոններից է հանդիսանում մեր փոքրիկ երկիրը՝ Հայաստանը:

«Յան» ազգանունն են կրում աշխարհահռչակ գիտական աշխատություններ, մեծ գյուտեր, ինչպիսիք են՝ Լյութեր Ջորջ (Կարապետ) Սիմջյանը, որ 1939 թվականին ստեղծել է կանխիկ դրամ տրամադրող ավտոմատ սարքը, ազգությամբ հայի է պատկանում ավտոմատ սայլակի գյուտը: Էմիլ Ավագյանը բազմաթիվ գյուտեր է արել հաշմանդամություն ունեցող անձանց կյանքը բարելավելու նպատակով, ինչի համար նա ստացել է պարգևներ:

Գունավոր հեռուստացույցի գյուտը նույնպես պատկանում է մեր ազգակցին. Հովհաննես Ադամյանը գունավոր հեռուստացույցի գյուտարարն է, 1925 թվականին Երևանի պետական համալսարանում՝ մայր բուհում, Ադամյանը պատրաստել է «Հեռատես» եռագույն պատկերման սարքը:

Այս մարդկանց՝ մեծ հայերի ցանկը անվերջանալի է, ես կարող եմ թվել ու թվել բազմաթիվ անուններ, որոնց մասին լսել կամ չենք լսել, ոմանց ես էլ այսօր հայտնաբերեցի իմ շարադրության շրջանակներում, բայց և այնպես ես խոսելու եմ մի մարդու կատարած աշխատանքի մասին, որ երևի թե այնքան առարկայական չէ, ինչպիսին հեռուստացույցի գյուտն է, սակայն նրա դերը ահռելի մեծ է հայ

ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում: Խոսքս մեծ Կոմիտասի մասին է, նրա կատարած ազգանվեր հսկայական աշխատանքի և այն մեծ ազդեցության մասին, որ մեծն Կոմիտասը թողել ու շարունակելու է թողել մեր կյանքում, հատկապես իմ, ով իր կյանքը չի կարող պատկերացնել առանց հայկական երաժշտության, առանց հայ երգի ու պարի: Բացի այն, որ ես մեծացել եմ Կոմիտասի երաժշտության ելևէջների ներքո, մենք մեր հայերենի դասաժամերին շատ ենք խոսել նրա կյանքի ու գործի մասին, բայց մեծ երաժշտահանի նկատմամբ հետաքրքրությունը մեծացավ, երբ ես մի պատահական օր կարդացի Պարույր Սևակի հանճարեղ տողերը մեծ կոմպոզիտորի մասին, որ «Կոմիտասը մեր երաժշտության Մեսրոպ Մաշտոցն է»: Ես չեմ հիշում որևէ հիշատակում մեր գրականության կամ որևէ բնագավառում, որ երբևէ մեկին համեմատել են Մեսրոպ Մաշտոցի հետ:

Եթե մինչ այդ ես բավարարվում էի միայն նրա երաժշտությունը լսելով, ապա այս տողերը վերլուծելուց հետո որոշեցի լուրջ զբաղվել Կոմիտասագիտությամբ, հասկանալ, թե որքան կարևոր է Կոմիտասը մեր ժողովրդի երեկվա, այսօրվա ու վաղվա համար ... Առաջին բանը, որ հասկացա, շատ պարզ էր. եթե Մեսրոպ Մաշտոցին պարտական ենք գիր ու գրականություն ունենալու համար, ապա Կոմիտասին՝ երգ երաժշտության. ահա այդ իսկ պատճառով հանճարեղ Սևակը չի վախեցել այդ համամեմատությունները կատարելուց:

Ո՞վ է Կոմիտասը, ի՞նչ դեր ունի հայ երաժշտության զարգացման գործում, ո՞րն էր իր գեր նպատակն ու արդյո՞ք այն իրականությունն դարձավ և ի՞նչ

պարտականությունն է դրված մեր ուսերին, որպեսզի շարունակենք նրա Աստվածահաճո գործը:

Կոմիտասը եղել է երգահան, երգիչ, երաժշտագետ, վարդապետ, ուսուցիչ, բանահավաք, խմբավար, մանկավարժ, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր և վերջապես երաժշտական էթնոլոգ, այսինքին՝ ազգային երաժշտության վարպետ: Նա թրքախոս մի որբուկ էր, որ իր աստվածային ձայնի պատճառով պիտի հայտնվեր Էջմիածնում ու դառնար մեր երաժշտության ռահվիրանը: Կոմիտասի նպատակն էր և ի վերուստ տրված կոչումը, որ աշխարհին ներկայացներ հայկական երաժշտական մշակույթի ավանդույթները և ապացուցել, որ հայն ունի իր ինքնուրյուն երաժշտությունը :

Այդ նպատակին հասնելու համար Մեծն Կոմիտասը շրջել է հայաբնակ բազմաթիվ բնակավայրեր, հավաքագրել, ձայնագրել մի քանի հազար երգ: Չնայած որ ցեղասպանության հետևանքով իր հավաքած երգերի մեծ մասը անհայտ պայմաններում կորել են, սակայն Կոմիտասը կարողացել է կատարել իր առջև դրած խնդիրը՝ մոռացումից փրկելով հայ ժողովրդի ստեղծած մի ամբողջ մշակույթ: Ահա այս երգերը հիմք ունենալով՝ նա նաև հետազոտում է հայ երաժշտության առանձնահատկությունները՝ մաքրելով այն ավելորդ խաղիկներից և աշխարհին ներկայացնելով որպես ուրույն ու ինքատիպ երաժշտություն:

Կոմիտասի գիտական և ստեղծագործական գործունեությունը նոր էջ է բացել հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ: Նրա նութագրումները, այս կամ երգի վերաբերյալ վերլուծությունները վկայություն են, որ այս կամ այն երգը կամ խաղիկը հայկական ծագում ունի. նա այնքան մանրամասնությամբ ու

Նրբորեն է վերլուծել ու հիմնավորել այս կամ այն գործի ծագումնաբանությունը ,որ երկակի կարծիք լինել չի կարող :Երկակի կարծիք չի կարող լինել ,քանի որ Կոմիտասի գերնպատակը աշխարհին ապացուցել , որ մեր երաժշտությունն անկրկնելի է ու իր նմանը չունի ,հակափաստարկ չկա...

Բացի ազգային ժողովրդական երգերի մշակումներից Կոմիտասի ստեղծագործական ժառանգությունն ընդգրկում է նաև հոգևոր երգերի մշակումներ:

Հոգևոր երաժշտությունը իմ տարերքն է, և մեր ժողովրդի այն մեծ հատվածը, որ նաև հոգևոր դաստիարակություն ունի ,անձնապես ու առանձնապես է հասկանում Կոմիտասի հոգևոր երաժշտության ուժի ներգործությունը մեր ներաշխարհի վրա` դարձնելով այն բարձր ու վսեմ :

Հոգևոր երաժշտությունն ասվածը, թվում էր, պիտի մնար եկեղեցու պատերից ներս, սակայն վերջին հարյուր տարիների ընթացքում այն հայ ժողովրդի համար դարձել է կենսակերպ, ապրելակերպ, որովհետև երաժշտության այս կտավները հոյակերտ կոթողներ են և զարդարում են մեր երաժշտության բեմելները աշխարհի ցանկացած անկյուններում :

Վկան` Կոմիտասի «Պատարագը», որ նրա` պահպանված միակ մեծակտավ ստեղծագործությունն է ,որը ոչ միայն հնչում է պատարագների ժամանակ,այլև` հանրաճանաչ համերգասրահներում :

Թվում է թե, ես շեղվել եմ շարադրության թեմայից, սակայն, ինչպես վերը նշեցի, Կոմիտասը իր` մեզ թողած ժառանգությամբ ոչ միայն պահպանել է ազգայինը, սակայն արմատական փոփոխություններ,մաքրագերծումներ է արել ,թոթափել օտարն ու պահպանել հայկականը...ահա այստեղ է նրա մեր կյանք ու

մշակույթ բերած նորամուծությունը՝ թեպետ ոչ առարկայական, բայց միևնույն ժամանակ շոշափելին ու իրական հարստությունը, որին չես կարող ձեռք տալ, վաճառել, դավաճանել, որին կարող ես տրվել ամբողջ հոգով ու անվերջ լսել ,լսել,լսելու հարստանալ

Կոմիտասը այն սակավաթիվ երաժիշտներից է, ով ապավինել է ամբողջությամբ հայկական տարրերի, չգիտեմ, թե որքանով է հայտնի, բայց նա իր կյանքի և գործունեության ընթացքում նաև զբաղվել է խազերի ուսումնասիրությամբ: Նրա շնորհիվ մասնակի վերականգնվել է մեր նոտագրությունը, որ կոչվում է «խազագրություն»: Կոմիտասի խազագիտական աշխատանքների ճակատագիրը մնացել է անհայտ, բայց ակնառու են նրանից քաղած փորձերն ու երաժշտական այն ժառանգությունը, որ կոչվում է հայ երաժշտություն ...

Բացի հոգևոր և ժողովրդական երգերի մշակումներից Կոմիտասը նաև հայտնի է իր գրած դաշնամուրային գործերով, որոնք Հայաստանի տարբեր տարածաշրջանների պարերի մշակումներ են՝ հիմնված հայ ժողովրդական տարբեր երգերի մեղեդիների վրա...

Պատահական չէ, որ Կոմիտասը նաև փորձեր է արել դասական երաժշտության մեջ. մեզ են հասել պատառիկներ նրա «Անուշ» և «Սասունցի Դավիթ» օպերաներից:

Թեմաների ընտրությունը ևս մեկ անգամ հուշում են ,որ անմեկնելի Կոմիտասը դրանց ընտրության գործում մեծ ուշադրություն է դարձրել ազգայինին ու միայն ազգայինին

Դժբախտաբար, նա չի հասցրել ամբողջությամբ կյանքի կոչել իր մտահղացումներն ու երազանքները: Թուրքերի հրահրած Ցեղասպանությունը ի վերջո նաև մեզանից խլել է մեծ երգահանին, գիտնականին ու մտավորականին ...

Թվում է՝ գիտնական լինելու համար անհատը պետք է միայն չոր գիտությամբ զբաղվեր, բայց չէ՞որ երաժշտությունը նույնպես մի մեծ գիտություն է, ուր Կոմիտասը անգնահատելի դեր է ունեցել ...

Նա հիրավի մեծ ճանապարհ է հարթել, որպեսզի մենք աշխարհի երաժշտության բազմալեզու ու բազմաձայն ներկայանակում մեր ձայնով ու երգեցողությամբ հանդես գանք և մեր երաժշտության ելևեջներով ու մելիզմներով աշխարհին պատմենք մեր հարուստ մշակույթի, անցած ուղու և ապագայի մասին ...

Ու եթե ինձ հարցնեն, թե ո՛վ է ամենամեծ հայ գիտնականը, որ ծառայություն է մատուցել հայրենիքին ու հայ ժողովրդին, առանց վարանելու կասեմ՝ Կոմիտասը, որովհետև ես ամեն օր եմ վայելում նրա արարչագործությունների բերկրանքը, հոգուս մեջ կրում, փառավորվում, մաքրագերծվում, հպարտանում նրա հայտնագործություններով, որ կոչվում է հայ երաժշտություն

Works Cited

2015 Կոմիտասի թանգարան-ինստիտուտ. Կոմիտասի մասին, Գործունեության ոլորտներ, 2015.

Կոմիտաս. Վիֆիպեդիա Ազատ հանրագիտարան, վերջին անգամ փոփոխվել է 23 Ապրիլի 2022.